

4899

295

34-12

1920.

(121)

ԵԱ ՊԱՅԱ Ի ԻԼ-ԱՊՅԱ

بیتنا



(Ո՛Վ ՓԱՌԱՑ ՓԱՌՔԸ)

Այս սերտիք կը պարունակէ
Պահայիզմի պատմութիւնը եւ սկզբունքները
ամենահամառօտ կերպով:

ՏՊ. «ՈՍԿԵՏՍ.Ո», ԳՍ.ՀԻՐԷ, 1920

2010

295
3u-12

295

3ս-12

48

ԵԱ ՊԱՅԱ ԻԻԼ-ԱՊՅԱ

ՍԱԼ
ԵՄ

(Ո՛Վ Փ Ա Ռ Ա Յ Փ Ա Ռ Ք Ը)

Այս սեռակը կը պարունակէ
Պահայիգմի պատմութիւնը եւ սկզբունքները
ամենահամառօտ կերպով:

2001

ՏՊ. «ՈՍԿԵՏԱՌ», ԳԱՀԻՐԷ, 1920

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայ սովազբութիւնը առաջին անգամ ըլլալով կը հիւրընկալէ Պահայի շարժման հեղինակութիւններէն մին :

Այսօր նոր աւետիս մը կուտանք հանուր հայ ժողովուրդին , անոր ամեն դասակարգերուն համար հոգեկան և մտաւորական անվերջ ճըշմարտութեան պաշար ունեցող Աստուծոյ վարդապետութեան վերստին յայտնութեան մեծ աւետիսը : Նոր կեանքի մը հրախրուած ըլլալով մարդկութիւնը , հին պայմանները , սաղմնային կեանքը անոր չափահաս ուժերուն չեն համապատասխաներ այլեւս : Աստուծոյ անվերջ ողորմութիւնը , ճիշդ խօստացուած ժամանակին յայտնուեցաւ , բերելով մեզի նոր սկզբունքներ , որոնց մէջ կը կայանայ մարդկային նիւթապէս , մտաւորապէս և հոգեւորապէս զարգացումը :

Գիտենք թէ մեր այս քայլը , թեր ու դէմ գաղտփարներու , վէճերու , հակառակութիւններու , զրպարտութիւններու , առանց քննելու , վճիռներ տալու , դարուն , միջավայրին և պայմաններուն ներածին չափով հալածանքներու և այլն շատ մը տխրալիւր դէպքերու տեղի պիտի տայ . բայց և այնպէս այս ամէնը և նման անսահման բռնութիւններ ճշմարտութեան անյաղթարշաւանքին դէմ ոչնչութիւններ կըլած են

46550-տ



31537-64

միշտ : Յիշեցէք պահ մը Հոռովմը , անոր կայս-
րութիւնը , անոր փառքը , անոր միապետական
ոյժը . յիշեցէք նմանապէս թէ ի՞նչպէս յաղ-
թուեցաւ Քրիստոսի աղքատ և տկար առաքեալ-
ներուն առջեւ . ի՞նչպէս այդ հփարտ գլուխները
խոնարհեցան և այն գոռոզ թագերը սկսան
կրել , մե՛ծ փառք համարելով , երբեմնի նախատ-
ուած և արհամարհուած Քրիստոսի դրօշը :

Ահա Աստուածային այդ ոյժն է որ այսօր
կրկին յայտնուեցաւ , բայց այս անգամ , ժամա-
նակին պահանջին չափով ծայրայեղ զօրութեամբ ,
ծայրայեղ կարողութիւնով :

ՍԻՄՕՆ և ՅԱԻՔ

Ե Ա Պ Ա Ն Ա Ի Ի Լ Ա Պ Ն Ա



Ա .

ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Մարդ իրականութիւնը Աստուածային շունչ
է և յաւիտենականութենէ ի վեր գոյութիւն ու-
նի , անսահման տիեզերքին մէջ :

Երկրիս վրայ ազրող մարդկութիւնը , սկըս-
եալ իր սաղմոսային վիճակէն զարգացնելու և
գէպի անսահման կատարելութեան հասցընելու
համար Աստուած իր անհուն ողորմութեամբ ,
տարբեր տարբեր ժամանակներու մէջ , Ս . Հո-
գին յայտնեց աստիճանաբար աւելի և աւելի
մեծ ոյժով :

Կատարելութեան անսահման այս ժամա-
նակը շրջաններու բաժնուած է : Ամեն շրջան
ունի իր անունը և իր կրօնքները , այսպէս Ագա-
մայ շրջանը «Մարգարէական շրջան» կոչուեցաւ
և տեւեց դրեթէ 7000 տարի և ունեցաւ 7 տար-
բեր կրօնքներ , այսինքն Հոգին Սուրբը եօթը
անգամ յայտնուեցաւ այս շրջանին մէջ : Այս 7
կրօնքներն են .

- 1 . Վէթչէականութիւն , 2 . Պրահմիութիւն ,
- 3 . Պուտիութիւն , 4 . Զրազաշտութիւն , 5 . Հը-

բէութիւն , 6 . Քրիստոնէութիւն , 7 . Իսլամութիւն :

Այս կրօնքները ուրիշ բաներ չէին եթէ ոչ Աստուածային միեւնոյն վարդապետութեան տարբեր ժամանակներու և տարբեր միջավայրերու ըմբռնմանց և պահանջներու համեմատ ընդլայնումը :

Ս . Հոգիին յայտնութիւնը , ամեն անգամ , անասնական կիրքերու , ագիտութեան և նիւթաօղաշտութեան մատնուած մարդկութիւնը վերականգնեցուցած և զարգացուցած է :

Ագամայ շրջանէն առաջ շատ մը շրջաններ կային և անկէ յետոյ շատ մը շրջաններ տեղի պիտի ունենան :

Ագամայ շրջանը վերջացաւ 1844ին և նոր շրջան մը սկսաւ , այսինքն «Պահաուլլահ»ի կամ «Աստուածային» շրջանը որ պիտի տևէ , ըստ Ս . Գրոց 50000 տարի :

Անցեալ շրջանին , հիմնադիր մարգարէներուն նպատակակէտը՝ մարդկութիւնը Աստուածային այս մեծ յայտնութիւնը ընդունելու պատրաստելն էր : Մարգարէները իրենց գիրքերով «Վերջին օր , Աստուծոյ օր , Արդարութեան օր , Դատաստանի օր» , և այլն անուններով որակեցին այս շրջանը :

Վերջին օրուան մէջ , մարդկութիւնը պիտի եղբայրանայ , ըսին , բարիները պիտի վարձատ-

րուին , չարերը պիտի պատժուին , տգիտութեան խաւարը պիտի փարատի , գիտութեան լոյսը պիտի շրջապատէ ամեն կողմ , թշնամութիւնը սիրոյ պիտի վերածուի և արդարութիւնը այն աստիճան պիտի թաղաւորէ որ գայլն ու ոչխարը , այսինքն բարբարոս և հեղահամբոյր ազգերը և անհասները եղբայրաբար պիտի ապրին :

Մարգարէները այդ մեծ օրուան թուականն ալ ճշդեցին , բայց իմաստուն և ընտրեալներուն յատկացնելու նպատակու այդ թուականները շատ մը հաշիւներով ծածկեցին :

Այսպէս , Դանիէլ 2300ը , յետոյ 1260ը տուաւ և աւելի վերջ , 1335ը աւելցուց :

Քրիստոս մատնանշելով Դանիէլի ցուցմունքները ասոնց , իր երկրորդ անգամ գալըստեան թուականն ըլլալը ցոյց տուաւ :

Յովհաննէս 1260 թիւը շատ մը անգամներ և շատ մը ձեւերով կրկնեց :

Մօհամեա իր կրօնքին վախճանը և դատաստանի օրուան թուականը 1000 տարիով ցոյց տուաւ :

Այսպէս նաև միւս կրօնքներուն մէջ :

Ամբողջ այս թուականները միեւնոյն տարին ցոյց կուտան , որ է Քրիստոսի 1844ը և Մօհամմէտի 1260ը :

Այս թուականին , ամեն կրօնքներէն շատ մը մարդիկ կը սպասէին Փրկչին գալուստը : Պուտոսիսները՝ Պուտոսան , Զրադաշտները՝

Պէհրամ Շահը, Հրեաները՝ Զօրոց Տէրը և Մէսիան, Քրիստոնեաները՝ Որդին՝ Հօրը փառքին մէջ, Իսլամները՝ Մէհաբին և Իսան, ալյսինքն Քըբիստօսը, և ալլն, և ալլն:

Բայց տգիտութեան խաւարը այն աստիճան ծածկած էր Ս. Գրոց իմաստները, որ մարդիկ անոնց տառական իմաստին հետեւելով իրենց փրկիչը այս բարձունքէն կը սպասէին մարմնաւոր կերպով, ինչ որ չեղաւ և չպիտի ըլլայ յաւիտեան:

Միայն Շէյխի իսլամ յարանուանութեան հաւատացեալները 1842ին, ալյսինքն իսլամական 1258ին իրենց կրօնապետին հրամանով և անոր մահէն ետքը խումբ խումբ ցրուեցան Իրաքի և Պարսկաստանի կողմերը, գտնելու համար Աստուծոյ մեծ Յայտնութեան կարապետը:

Բ.

ՊԱՀԱՅԻՉՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՆ

(Պապ աւետարները)

1844ին, Պարսկաստանի Շիրազ քաղաքին մէջ 25 տարեկան երիտասարդ մը մէկէն ի մէկ յայտնուելով՝ «ես Աստուծոյ օրուան աւետարներն եմ, ես Եղիան եմ, ես Մէհաբին եմ» ըսաւ, ինքզինքը Պապ (գուռ) կոչեց ու սկսաւ ուժով ցընցել իսլամութեան հիմերը, քարոզելով Հօր Աստուծոյ թագաւորութեան հասած ըլլալը: «Ա՛ն է, կ'ըսէր Պապը բարձրադազկ, որ պիտի փոխէ

մարդկութեան ճակատագիրը, պիտի փրկէ մարդկութիւնը՝ միացնելով բոլոր կրօնքներն ու ժողովուրդները և այս փոփոխութիւնը պիտի տեսնէք իմ յայտնութենէս 19 տարի վերջը միայն»:

Պարսիկ մօլլաները կառավարութիւնը գըրգըռելով՝ սկսան անխնայ հալածել Պապիները, թալանել անոնց ինչքերը, չարչարել զանոնք և շարգել:

20000է աւելի անձինք և 400 մեծ կրօնաւորներ այս ճամբուն մէջ նահատակութեան փառքին արժանացան:

Պարսիկ կառավարութիւնը, ճարահատ՝ կարծելով թէ շարժման հեղինակը անհետացնելով պիտի կրնայ մարել այդ լոյսը, 1850ին գնդակահար սպաննել տուաւ Պապը:

Բայց հակառակը եղաւ. պապիութիւնը անակնկալօրէն ծաւալեցաւ թէ՛ Պարսկաստանի և թէ՛ դրացի երկիրներուն մէջ:

ՊԱՀԱՌԻԼԼԱՀ

(Հայրը)

1852ին, պարսիկ կառավարութեան և մօլլաներուն անողորմ հալածանքէն ազատուելու համար խումբ մը պապիներ հետեւելով Պահաւելլահի Պաղտատ գաղթեցին:

Պաղտատի իսլամները սակայն, պապիութեան ծաղկելուն և տարածուելուն դէմ զայրանալով՝

սկսան ամբաստանել Պահաուլլանը և 1863ին Պօլսէն եկած հրամանին համաձայն Պահաուլլան իր հետեւորդներէն մի քանիին հետ առաջնորդուեցաւ Կ. Պօլիս :

Պաղատէն մեկնած օրը Պահաուլլան յայտնեց իր հետեւորդներուն, իր՝ Աստուծոյ մեծ և տիեզերական յայտնութիւնն ըլլալը :

«Պապիութիւնը վերջացաւ, ըսաւ Ան, այսուհետեւ Պահայի անուն պիտի կրէք և այս անունով տանջուելու և գործելու էք դուք : Ինչպէս մարդկութեան ճակատագիրը դուք պիտի փոխէք, սիրոյ և աշխատութեան սկզբունքներով մարդկութեան վերածննդեան ու զարգացման պատճառ պիտի ըլլաք :»

Պահաուլլան Պոլսոյ մէջ միայն հինգ ամիս մնաց : Շէյխ-իւլ-իսլամին հրամանով թուրք կառավարութիւնը Էտիւրնէ աքսորեց զայն :

Պահաուլլանի պատգամը այս անգամ սկսաւ Եւրոպայ մտնել :

Նախանձի և կրօնամոլութեան շատ մը շարժառիթներով, թուրք և պարսիկ կառավարութիւնները իւրեւաններու և մօլլաներու կողմէ տըրուած ֆէթվաներու հիման վրայ՝ որոշեցին բնաջինջ ընել Պահաուլլանը և մարել անոր վարդապետութեան լոյսը և առ այս Աքքայի հռչակաւոր բերդը ընտրեցին իբրեւ անոր վերջին աքսորավայր, ուր խեղդել կարծեցին ճշմարտութեան ձայնը :

1868ին Պահաուլլան Էտիւրնէն փոխադրուեցաւ իր երրորդ և անտանելի աքսորավայրը, ու այսպէսով կատարուեցան մարգարէից բերնով եղած ամբողջ խոստումները և մարգարէութիւնները :

Հակառակ երկու իսլամ կայսրութեանց բռնաւոր կամքին, Պահաուլլան բարձրացուց իր Պատգամը այդ մութ բանտին խորերէն, իր հրուշակաւոր թագաւորաց թուղթերը շրջելով աշխարհի ամենամեծ կայսրերու և թագաւորներուն, հրաւիրելով զանոնք ճշմարտութեան, միութեան և սիրոյ :

Պահաուլլան Աքքայի մէջ ի լոյս հանեց իր վարդապետութեան հոգեւոր և աշխարհային ընկըղբունքները և շատ չանցած Պահաուլլանի գրօշը սկսաւ ծածանիլ շատ մը մեծ քաղաքներու մէջ :

1892ին Պահաուլլան համբարձաւ, կնքելով իր վարդապետութիւնը «Ուխտի Գիրք»ով, որուն մէջ գրեց Ան իր վերջին կամքը :

ԱՊՏԻԻԼ-ՊԱՂԱ

Որդին — Շառաւիղը

Ապաւիւլպահա ծնաւ 1844ին, Դեհրանի մէջ, ճիշդ այն գիշեր, երբ Պապը Շիրազի մէջ քարոզելու սկսաւ : 8 տարեկան էր երբ հօրը հետ գաղթելու ելաւ և մինչեւ 1908 բանտերու և աքսորավայրերու մէջ մնաց :

Պահաուլլահ իր բոլոր իշխանութիւնը իր որդիին՝ Ապտիւլպահանին յանձնեց իր Ռւխսի Գիրքով :

Հակառակ Ա.ք.քայի սահմաններուն մէջ փակուած ըլլալուն՝ 1892էն սկսեալ մինչև մեր օրերը, Ապտիւլպահան իր վրայ հանգչած Տիրոջը հողերին, իմաստութեան և հանճարի հողերին, խորհուրդի և զօրութեան հողերին, գիտութեան և Աստուծոյ վախի հողերին ուժով, Աստուծոյ պատգամը հսկայաքայլ տարածեց աշխարհի ամեն կողմերը, ու հիմայ Պահայիները տասնեակ միլիոններով կը հաշուուին :

1908ին առաջին անգամ ըլլալով Ապտիւլպահան դուրս ելաւ իր աքսորալայրէն և մինչև 1913ի վերջերը Եւրոպայի և Ամերիկայի ամենամեծ քաղաքներու, համալսարաններու, եկեղեցիներու, ժողովատեղիներու մէջ շատ մը քարոզութիւններ ըրաւ, հռչակեց հօրը սկզբունքները, յորդորեց մարդկութիւնը ձգել ամեն մոլութիւն և միանալ սիրով, միմեանց աջակցելու և արգելք հանդիսանալու համար ապագայ արիւնահեղ պատերազմին, որ ամբողջ մարդկութիւնը սուղի, կոծի և արցունքի սլտի մատնէ. բացաւ Ս. Գրոց գաղանձները, լուսաբանեց բոլոր կրօնքներու խորհուրդները և վերջապէս, 1914ին Եգիպտոս դառնալով աշխարհի բոլոր Պահայիներուն յորդորեց քաղաքական խնդիրներով չզբաղելու, ամեն ժողովուրդներու հետ սիրով և

անձնուիրութեամբ յարաբերութիւն ընելու. և գալիք տագնապի օրերուն համբերատար ըլլալու խրատներ տալէ վերջ վերադարձաւ Ա.ք.քա, ուր՝ կը մնայ մինչև այսօր :

Գ .

ՊԱՀԱՅԻՉՄԻ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ

Իւրաքանչիւր կրօնք երկու մեծ հիմերու վերայ հաստատուած է .

1. Ընդհանրական կամ անփոփոխ հիմ.— Ասիկա հողի հետ կապ ունի և ամեն կրօնքներու հիմնական և յաւիտենական անփոփոխ սկզբունքն է . ինչպէս՝ ճանչնալ զԱստուած, Սէր և բարոյականութիւն :

Նախնի կրօններու մէջ այս հիման (Սրբութիւն Սրբոց) խորհրդա-անունը արուած է :

2. Մասնաւոր կամ փոփոխական հիմ.— Ասիկա մարմնոյ և մարդկային յարաբերութեանց հետ կապ ունի և իւրաքանչիւր կրօնքի մէջ միջավայրի ու ժամանակի ըմբռնողութեան կամ պահանջին համեմատ բարեփոխուած է . ինչպէս՝ ամուսնական, առեւտրական, ժառանգական, կառավարական, կրթական ևն . օրէնքները :

Նախնի կրօնքներու մէջ այս հիմը («Երուսաղէմ քաղաք») խորհրդա-անունով մասնանշուած է :

Արդ, Պահաուլլահի Սրբութիւն Սրբոցը և Երուսաղէմ քաղաքը ի՞նչ են : Պահաուլլահի Սրբութիւն Սրբոցը արդի տրամաբանութեան դահացում տուող ճշմարիտ Աստուածճանաչութիւն, սէր և անձնուիրութիւն է : Իսկ Անոր Երուսաղէմ քաղաքը բացարձակապէս նոր է և նախնիներէն ծայր աստիճան գերազանց :

Հոս կը ներկայացնենք Պահաուլլահի գծած օրէնսագրութեան 12 հիմնական սկզբունքները, որ Յայտնութեան գրքին 12 մարդարիտներն ուղոներն են, ուսկից միայն կարելի է մտնել երջանկութեան դրախտը, այսինքն այս սկզբունքներով միայն կարելի է ապահովել մարդկային երջանկութիւնը, հաւասարութիւնը, յառաջդիմութիւնը և կատարելութիւնը (յայտ 21-20)

Այս սկզբունքները 50 տարի առաջ հաստատեց և յայտարարեց Պահաուլլահ, երբ ինքը գերի, բանտարկեալ և չարչարանքներու ենթարկւած էր :

Ահաւաստիկ այդ սկզբունքները.

1. Մարդկային աշխարհի միութիւնը .
2. Ճշմարտութեան ազատ խոզարկումը .
3. Ամբողջ կրօնքներու հիմնրուն մէկ ըլլալը .
4. Կրօնքը մարդկային ցեղի միութեան ազդակն ըլլալու է :
5. Կրօնքը գիտութեան և տրամաբանութեան համաձայն ըլլալու է .

6. Մարդը և կինը հաւասար են .
7. Հրաժարիլ ամեն նախապաշարումներէ .
8. Տիեզերական խաղաղութիւն .
9. Ամեն օր գիտութիւն և արհեստ ունենալու է .
10. Տնտեսական հարցին լուծումը .
11. Ընդհանրական լեզու .
12. Միջազգային դատարան .

Գ.
ՎԵՐՁՍԻՄԱՆ

Սիրելի հայրենակիցներ, Պահաուլլահի հաստատած և Ապաւելպահայի քարոզած և հուշակած վարդապետութեան սկզբունքներուն այս համառօտագրութիւնը յանձնելով ձեր ուշադրութեան, ապահով ենք որ առանց քննական բովէ մ'ացնելու զանոնք՝ վճիռ պիտի չարձակէք :

Մեր ազգը պատմութեան էջերը զարգարող և յաւիտենական փառքի արժանի համարուելու համար մեծ ընդունակութիւններ ցոյց տուաւ, Քրիստոսի յայտնութեան ատեն՝ երբ ազգովին ընդգրկեց քրիստոնէութիւնը՝ հեռանալով քաջաբար իր հին կրօնքէն և այդ կրօնքի յարանուանական քաժանութիւններէն, ու միացաւ մեծ ճշմարտութեան հովանիին տակ :

Ահա այն մեծ ճմարտութեան է որ կը հրաւիրենք հայ ազգը այսօր, յաւիտենական ճշմար-

տութեան՝ որ իր նոր անունով յայտնուած է :
(յայտ . 3—12) :

Կոյր հետեւողութեան դարը անցած է այլեւս .
թող տեղի տան կղերական և հոգեւոր ամեն
տեսակ վարձկան ղեկավարիչները . թող չկար-
ծեն թէ Աստուածային գիտութեան այս մեծ ջըր-
հեղեղին դէմ կենալ կարելի է :

Կը հրաւիրենք ժողովուրդը անկողմնակալօ-
րէն քննելու այս Պատգամը և քաջաբար կրկնու-
լու մեր քաջ նախահայրերուն ֆրիստոսի յայտ-
նութեան ատեն ըրածը՝ որ է «ընդգրկել ազգո-
վին նոր լոյսը» :

Այժմ ժամանակը փոխուած է . բարբարոս և
մութ դարերու գործերը անցան . տիեզերական
պատմութիւնը ոսկի տառերով պիտի արձանա-
գըրէ մեր պատմութեան կրկնումը , երբ մենք
զերծ և ազատ ամեն նախապաշարունակներէ՝ փըն-
տըռենք ճշմարտութիւնը , անվախ ընդգրկենք
և բարձրաձայն յայտարարենք զայն :

Հայ ազգին վերակենդանութիւնը հոս է ,
փառքը հոս է . մենք մեր քաջ նախահայրերուն
միեւնոյն քաջ գաւակներն ըլլալու ենք :

Օ՛ն , բանանք ուրեմն մեր աչքերը , պատենք
մթութեան վարագոյրները , քննենք ճշմարտու-
թիւնը և մօտենանք անոր : Ահա՛ այն միակ ազ-
գակը , որով կրնայ ապրիլ և զարգանալ մարդ-
կութիւնը :



4899

2013

<< Ազգային գրադարան
NL0031875

9

Մօտ օրէն լոյս պիտի տեսնէ Ապս-իւլ-Պահայի,
Լանէի խաղաղութեան ժողովին ուղարկած նա-
մակին բարգմանութիւնը :

ԾԱՆՕԹ.— Ուրախութեամբ կը պատասխան-
ուի ամեն գրութիւններու :

ՀԱՍՑԷ .—

Society of Bahāi Publication

Abbas Street, No. 132

CAIRO (Egypt).

4737